

Անձնագրում օտարերկրյա պետություններում վավերականության
ժամկետի մասին նշում կատարելը

Օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետի մասին նշում կատարելու համար հաշվառում ունեցող քաղաքացին կամ քաղաքացու կողմից լիազորված անձը (լիազորագիրը վավերացված նոտարական կարգով) ներկայանում է ԼՂՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների բաժին՝ ներկայացնելով անձնագիրը:

Օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետը երկարացվում է առավելագույնը 5 տարի ժամանակով և յուրաքանչյուր տարվա համար վճարում է պետական տուրք՝ 1000 դրամի չափով:

16-18 տարեկան քաղաքացիների անձնագրերում օտարերկրյա պետություններում վավերականության մասին նշումը կատարվում է առանց ծնողների կամ ծնողներից մեկի, կամ օրինական ներկայացուցիչների համաձայնության հիման վրա, նշված դեպքում անձնագրային ծառայությունը պարտավոր է դիմումատուին իրազեկել, որ առանց երկու ծնողների համաձայնության երեխայի՝ ՀՀ տարածքից դուրս գալու իրավունքը կարող է սահմանափակվել սահմանային մարմնի կողմից:

Նախագորակոչային տարիքի զինապարտների անձնագրերն օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշումը կատարվում են մինչև նրանց գորակոչային տարիքը լրանալը, իսկ գորակոչային տարիքը լրանալու դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ստացած տարկետման ժամանակով:

Անձնագրում օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետի մասին նշումը կատարվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում: